

զենմամբ գառակց, յօդակց եւ յայծից՝ պատարագեալք մտով օրհնուչրեան»։ որոց վըրայ երբ յաւելունք «մրգաց» բաժինն ալ (Արշ. ԼԿ), մեր առջեւ կ'ունենանք ազնուական կոչնոց ճոխութիւնը¹։ Ասոր մէջ սակայն զգալի է տօնիս սեպհական ճաշացուցակ մը, որ կը կազմուի ընտանի անասնոց մտերով. այս ինքն անոցմով միայն՝ որ յարմար էին մատաղի (աստ, 327). որով բացակայ են սեղանէս վայրի՝ թէեւ սուրբ չորքոտանիք, եւ ծովայինք նոյն իսկ արգելուած, ինչպէս կ'իմացնէ Արշարունին՝ ըսելով. «Այլ ոչ (կերբցես) ձուկն՝ վիշապացեալ ի խորս խաւարի մնալով՝ ատելին քեզ» (անդ). այս ինքն՝ զի ձուկը ջրին ներքեւ բնակելով, կը նմանէր վիշապակերպ խաւարբնակ սատանային, եւ այս պատճառաւ այսօր խորշելի էր, ըստ որում մատաղի ալ անյարմար (աստ, 327)։ Սեղանիս լրութեան համար անպակաս են նաեւ «բանք ուրախութեան», բայց պարկեշտութեան սահմանի մէջ, եւ աննման սովորական կոչնոց մէջ ընդունուած յիմարաբանութեանց (աստ, 207)։

1. Հմմտ. աստ, 175, '78-83, 216, '26.